

3

623.5

σ - 89

04 AUG 2010

MAR 2010

ՊԱՋԸ-ԱՎԻԱԲՍԸ ԽՍՅ ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
Հ Ե Ն Ա Ր Ա Ն Ն Ե

ԽՍՅ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄ ՄԻՈՒԹՅՈՒՆ

623.5
Օ-89

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՐԱՁԳԱ-ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱ-
ԳՈՐԾՄԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ

//////

ՊԵՏՆԱԿԱՆ
ՀՍՊՀ - ՍՍՐԱ
ՄԵ. Ա. ՄԱՐՏԻՆՅԱՆ

1932

ՌԱԶՄՇՐԱՏԲԱԺԻՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

15 MAY 2013

13-448

623.5

Օ - 89

ԽՍՀՄ ՊԱՋՐ-ԱՎԻԱԲԻՄ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԻԻ ՌԱԶ-
ՄԱԿԱՆ ԲԱԺՆԻՑ

Հրատարակելով այս ծրագրերը հրաձգա-տակտիկական կառա-
րելագործման խմբակների համար, Կենտրոնական Սորհրդի ռազմա-
կան բաժինը խնդրում է Պաշր-Ավիաբիմի կազմակերպութչյուններին
ստուգել այս ծրագրերը գործնականում և ուղարկել իրենց կարծիք-
ները Ռազմական բաժնին (Մոսկվա Նիկոլսկայա, 25/27) :

Ռազմական բաժինը գտնում է, Վոր յերկարատե արձակուրդի և
պահեստի շարքային կազմի պատրաստութչյան բարձրացման և խրմ-
բակների մեջ մասսայական ներգրավման համար պետք է անցկացնել
չորոժամյա պարապմունք առավելապես հանգստի օրերին ղեկա-
տում (տոտնորյակում) մեկ անգամ : Ընդ վորում հարկավոր է պարապ-
մունքների մեկ օրվա ընթացքում թեորեակի պարապմունքը հերթա-
փոխել գործնական (պրակտիկ) պարապմունքի հետ :

ԽՍՀՄ Պաշր-Ավիաբիմի Միուքյան Կենտրոնական Խորիքի ռազ-
մական բաժնի պետ՝ Ա. ՄԻՒՆՈՎ

Ավ. հրահանգիչ՝ ՅԱ. ՄՈՒՐԻՉԻՉ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆԻՏԵՐ

1. Նպատակն ու խնդիրները

Հրաձագա-տակտիկական կառարելագործման խմբակի նպա-
տակն է թարմացնել և խորացնել ռազմական գիտելիքները՝

ա) այն անձանց, վորոնք ռազմական ուսուցումն անցել են III տա-
տիճանի ռազմական գիտելիքների հետեակային խմբակներին ծրագր-
րերով :

բ) հետեակի շարքային կազմի այն գինվորականների, վորոնք հաչվ-
վում են յերկարատե արձակուրդում :

գ) ԲԳԿԻ հետեակի պահեստի գինվորականների գիտելիքները :

Իր գործնական աշխատանքում հրաձգա-տակտիկական կառա-
րելագործման խմբակը առաջադրում է հետեյալ խնդիրները :

ա) ամբացնել և դարգացնել ԲԳԿ բանակում կամ Պաշր-Ավիաբիմի
կազմակերպութչյուններում (վարժական կայաններ, ռազմական գի-
տելիքների խմբակներ), ռազմական ուսուցումն անցնելու ժամանակ
ձևք բերած ռազմական սովորքները :

բ) գաստիարակել կայուն ու կարգապահ մարտիկ-բազաբայիններ,
վորոնք պատրաստ լինեն խորհրդային իշխանութչյան հենց առաջին կո-
չին պաշտպան կանդնելու ԽՍՀՄ, համոզված լինելով, վոր ճիշտ է Համ

Կ(բ)Կ և Սորհրդային Իշխանության միջադրային ու ներքին քաղաքականութիւնը, դաստիարակել սոցիալիստական շինարարութեան ակտիվ մասնակիցներ, համոզված կոլտնտեսականներ, հարվածայիններ իրենց արտադրութեան մեջ և պրոլետարական գիկտատուրայի դասակարգային թշնամիներին անհաշտ թշնամական վերաբերմունք ցույց տվողներ ք) դաստիարակել մոտավորապէս ԲԳԿԻ կրտսեր հրամատարի պատրաստութեան ծախարով ուղղմական ու ուղղամ-կիրարկելի գիտելիքներ կողքակտիվ և անհատական ուսումնասիրութեան սովորներ:

դ) պատրաստել հրահանգիչներին ուղեկաններ Պաշը-Ավիաքիմի ուղղմական և մասսայական աշխատանքի համար:

ե) տարածել ուղղմական գիտելիքներ և պրոպագանդ մղել յերկրի պաշտպանութեան խնդիրներին շուրջը ԽՍՀՄ աշխատավորութեան լայն մասսաների շրջանում:

2. Մեքոդական ցուցումներ

Հրահագ-տակտիկական կատարելագործ-խմբակների ամբողջ պատրաստութեան հիմքը տակտիկա-հրահագային պատրաստութեանն է, վորի շուրջը պետք է կոմպլեկսել բոլոր մնացած ուղղամ-կիրարկելի գիտելիքները: Մրազրի տարեկան կուրսը հաշված է ձմեռվա ժամանակաշրջանի համար՝ նոյեմբերից մինչև մայիս-ամիսը (դաշտային աշխատանքներից ամենից ավելի ազատ ժամանակ): Պարապմունքներն անց են կենում դեկտեմբերից մեկ անգամ յուրաքանչյուր պարապմունք 4 ժամ: Ընդամենը ձմեռը 15 պարապմունք կամ 60 ուսումնական ժամ:

Ամբողջ ուսուցումը կառուցված է մարտիկների քաղաքական և Ֆիզիկական դաստիարակութեան հիման վրա, նրանց մեջ մարտի համար կամքային Ֆիզիկական անհրաժեշտ հատկութիւններ զարգացնելու հիման վրա, զարգացնելու նրանց մեջ դասակարգային ինքնագիտակցութեան, ըմբռնելու՝ կարմիր բանակայիններին վրա դրվող մեծ խնդիրները, վորպէս սոցիալիստական հայրենիքի պաշտպանների, զարգացնելու նրանց մեջ համառութեան, համարձակութեան, վճռականութեան, նախաձեռնութեան, անձնագոհութեան պատրաստակամութեան և ընդունակութեան հաղթահարելու յերթային ու մարտական կյանքի դժվարութեանները:

Մարտական պատրաստութեան վորակը բարձրացնելու հիմնական մեթոդը պետք է լինի սոցիալիստական մրցակցութեանն ու հարվածայնութեանը: Ղեկավար կազմը պարտավոր է զարգացնել սովորողների նախաձեռնութեանն ու ակտիվութեանը սոցիալիստական մրցակցութեան մեջ և այդ ակտիվութեանն ու ինքնագործունեությունն ուղղի ամենից առաջ մարտական պատրաստութեանը բարձրացնելուն:

Ուսուցումն անց է կացվում 8-12 հոգուց բաղկացած խմբակ-ընկերում: Ձոկերը կազմում են դասակներ, իսկ վերջիններս՝ վաշտեր: Խմբակների կազմը պետք է ինամբրով բնորել ուղղմական պատրաստակա-նութեան և ընդհանուր զարգացման միակերպութեան տեսակետից:

Յուրաքանչյուր խմբակին պետք է կցել մշտական ղեկավար-խմբակավար միջին կամ կրտսեր հրամատարական կազմից, վորը պատասխանատու յե իր խմբակի հաջող պատրաստութեան համար:

Ուսուցման լավագույն մեթոդը կլինի իսկական զենքի վրա գործնական ուսումնասիրութեանը, իսկական վարժական գույքի վրա ու-

սումնասիրումը և պարապմունքները իսկական տեղանքում անցկացնելը:

Խմբակի պարապմունքների բովանդակութեանը պետք է լինի ժամանակակից մարտի հրահագ-տակտիկական մարտական որինակներէ ու համառոտ խնդիրների մշակումը: Այս պարապմունքները, յեթե հնարավոր չէ անցնել իսկական տեղանքում, այն ժամանակ պետք է անցնել ավազով լցրած առկղի վրա: Բոլոր պարապմունքներին պետք է պահանջել վորոշակի կատարում, պարզ հրամաններ ու կարգադրութեաններ այն ձևով, ինչ ձևով ԲԳԿԻ մարտական կանոնադրքերն են պահանջում: Առանձնապէս ուշադրութեան պետք է դարձնել սովորողների մեջ հրահանգչական սովորներ մշակելու վրա: Այդ նպատակով հաճնարարվում է հաճախ հնարավորութեան տալ սովորող կազմին վարժվելու խմբակի հետ ինքնուրույն պարապմունքներ անցկացնելուն խմբակային ղեկավարների անմիջական հսկողութեամբ և ղեկավարութեամբ:

Ուսումնական ծրագիրն անցնելու հաջողութեանը գլխավորապէս կախված կլինի հրահանգչի (ղեկավարի) կարողութեանից, թե վորքան նա կարողանում է հետաքրքրութեան առաջ բերել սովորողների մեջ, նրանց մեջ ակտիվութեան զարգացնել և զրավել նրանց սոցմրցակցութեան և հարվածայնութեան մեջ:

3. Կազմակերպումն ու ղեկավարութեանը:

Հրահագ-տակտիկական կատարելագործման խմբակը կազմակերպում են Պաշը-Ավիաքիմի տեղական խորհուրդները վարժական կա-յաններին, պաշտպանութեան աներին, կարմիր քանակի տներին, զորամասերին, բոնվորական ակումբներին, խրճիթ-ընթերցարաններին, աղմական անկյուններին կից և այլն: Անհրաժեշտ է այդպիսի կայուն խմբակների ցանց ունենալ: Այդպիսի ցանց կառուցելու ժամանակ պետք է յեթակետ ունենալ հետևյալ սկզբունքը՝ յուրաքանչյուր խորհուրդ կոլտնտեսութեան, խորհանտեսութեան և մեքենա-տրակտորային կայանի, կամ գործարանային ձեռնարկութեան համար մեկ խմբակ: Յերկրային զորամասերի համալրման ուսյուններում ցանկալի յե ունենալ յուրաքանչյուր վաշտի տեղամասում վոչ պակաս մեկ խմբակից՝ պահեստի շարքային կազմի ամենից ավելի կուտակման կետերում:

Հրահագ-տակտիկական կատարելագործման խմբակների ուղղմական ու ուղղամաղաքական աշխատանքի կենդանի ու անմիջական ղեկավարութեանը տրվում է Պաշը-Ավիաքիմի ուսյունական խորհուրդների և մոտիկում դասավորված զորական մասի հրամատարութեան վրա: Աշխատանքի ամենորյա ղեկավարութեանը, նրանց աշխատանքների պլանի հաստատումը, պարապմունքները կանոնավոր անցկացնելու հսկողութեանը և նյութական պայմանների ապահովումը կենսագործում են Պաշը-Ավիաքիմի տեղական բջիջները:

Պաշը-Ավիաքիմի բջիջը հսկողութեան տնենալու և ղեկավարելու համար խմբակին կցում է բջիջի բյուրոյի անդամներից մեկին:

Վոչ պակաս քան յեկուր ամիսը մեկ անգամ Պաշը-Ավիաքիմի բջիջի բյուրոն յսում է ղեկուցում խմբակի գրութեան մասին:

Յուրաքանչյուր խմբակի դուրս և կանգնած զինվորական ղեկավարը, վորը նշանակվում է Պաշը-Ավիաքիմ բջիջի բյուրոյի կողմից միջին հրահագմի անձնավորութեանից: Յերկրային զորամասերի համալր-

ման սայաններում այդ թեկնածուները նախապես համաձայնեցվում է յերկրային գործառնի հրամատարություն հետ:

4. Գործնեյության ձևերը.

Ռազմական և ուղիղ-բաղադրական պատրաստությունը խնդիրները լավագույն ձևով լուծելու համար անհրաժեշտ է՝

ա) ողտագործել ուղիղական անկյունները, իսկ յեթև չկան, կազմակերպել, կենտրոնացնելով այնտեղ ուղիղական ու ուղիղաբաղադրական լուղուզներ, պլակատներ, ուղիղական բովանդակություններ նկարներ, ուղիղական ու Պաշտ-Ավիաբիմյան դրադարաններ, ուղիղախաղեր, կարմիր բանակի առաջնորդներին նկարներ, մարտներ և ուսուցման ծրագրի պահանջներին համապատասխան այլ պիտույքներ:

բ) ողտագործել տիրը (ձգարանը), յեթև, չկա կառուցել կամ սարքավորել հրաձգարան (հրաձգավայր) փոքրակալիբր հրացանով հրաձգություն համար:

գ) կազմակերպել ուղիղական ու սպորտային խաղեր, ախուճարային յերեկոներ, եքսկուրսիաներ զեպի թանգարաններ և ցուցահանդեսներ. ախուճներում և ուղիղական անկյուններում անցկացնել ուղիղական գրքերի, թերթերի, ժուռնալների ընթերցում. մասսայական ուղիղական աշխատանքի բոլոր տեսակները սերտորեն կապել խմբակի ընդհանուր պլանի և տեղական կուսակցական, խորհրդային, արհմիութենական և ժյուս հասարակական կազմակերպություններին աշխատանքները պլանի հետ:

Յուրաքանչյուր խմբակ հանդիսանալով վորպես կամավոր, ինքնագործ կազմակերպություն, պետք է իր շարքերի ներսում պահպանի ածուր հասարակական կարգապահություն: Խմբակի կազմից կարելի յե հեռացնել այն ժամանակ, յերբ սխտեմատիկ չեն հաճախում պարտադմունքներին և չեն յենթարկվում սահմանված ներքին կարգ տեսանոներին:

Կարմիր բանակի գործատերը, մանավանդ յերկրային գործատերը, ամեն կերպ աջակցություն և ոգնություն են ցույց տալիս սայանական խորհուրդներին և Պաշտ-Ավիաբիմի բջիջներին՝ կազմակերպելու և զեկավարելու հրաձգա-աակտիկական կատարելագործման խմբակների աշխատանքը: Այդ նպատակով նրանք յրենց վրա յեն վերցնում՝

ա) նախաձեռնությունը՝ խմբակներ կազմակերպելու այնտեղ, վորտեղ զեուես չեն կազմակերպված:

բ) յեթև հնարավոր և, հանձնարարում և առանձնացնում են զինվորական աշխատողներ՝ խմբակների աշխատանքը զեկավարելու համար:

գ) ոգնում են խմբակներ զեկավարներին կազմելու աշխատանքների պլանը:

դ) հրահանգում և ստուգում են խմբակների աշխատանքը, վերջիններիս տալով համապատասխան ուղղություն բջիջի կամ Պաշտ-Ավիաբիմի սայունական խորհրդի միջոցով:

ե) աջակցում են խմբակների համար նյութական բազա ստեղծելու:

զ) ապահովում են խմբակներին՝ ուսուցման վերաբերյալ համապատասխան գրականություններ և ձեռնարկներով, վորքան հնարավոր է:

5. Նյութական ապահովումը

Հրաձգա-աակտիկական կատարելագործման խմբակը դրամավորվում է Պաշտ-Ավիաբիմի տեղական բջիջի ընդհանուր նախահաշիվով:

Փոքրակալիբր զենքով, զասական պիտույքներով, գործիքներով և այլն ապահովումը կատարվում է Պաշտ-Ավիաբիմի տեղական բջիջի հաշիվն:

Խմբակը չունի սեփական գույք:

Խմբակի համար զնած ամբողջ գույքը գրանցվում է Պաշտ-Ավիաբիմի տեղական բջիջի գույքի ցուցակի և մատյանների մեջ:

6. Պաշտ-Ավիաբիմի շրջխորհրդի ռազմական բաժնի պետի պարտականությունները.

Նախքան յուրաքանչյուր ուսումնական տարվա կամ ժամանակաշրջանի պարապմունքներն սկսելու շրջխորհրդի ուղիղական բաժնի պետը պետք է Պաշտ-Ավիաբիմի բջիջների հետ միասին բոլոր խմբակներին հրահանգիչների խնամքով ընտրություն կատարի, հրահանգի նրանց պարապմունքներն անցկացնելու կազմակերպման ու մեթոդների նկատմամբ և աջակցի խմբակներին նյութական ապահովմանը, սերտ կապ հաստատելով գորական մասերի և տեղական կազմակերպությունների հետ:

Ղեկավարում և պատասխանատվություն է կրում խմբակների պարապմունքների դրամն և անցկացման համար:

Պարբերաբար կազմակերպում է հրահանգչական խորհրդակցություններ հրահանգիչների պատրաստման վերաբերյալ: Հրահանգչական պարապմունքներն այնպես պետք է դրված լինեն, վորպեսզի պարապմունքներից հետո յուրաքանչյուր հրահանգչի համար միանգամայն պարզ լինի առաջիկա պարապմունքների նպատակն ու եյությունը, զիտեղիքներն ու սովորքների ծավալը, պարապմունքների ընթացքը, այլև անցկացվող պարապմունքների կազմակերպումն ու մեթոդը:

7. Խմբակի ռազմական զեկավարի պարտականությունները

Խմբակի ուղիղական զեկավարը կազմում է ամենական պլան-պարապմունքների որագրացուցակ: Միջոցներ և ձեռք առնում ապահովելու զասական պիտույքներով, զենքով, անհրաժեշտ գույքով: Ղեկավարում է խմբակի հրահանգիչների աշխատանքը: Անձամբ անց է կացնում խմբակներից մեկի պարապմունքները, նույնպես և անց է կացնում ուսուցման ամենից ավելի պատասխանատու բաժինները բոլոր խմբակների հետ: Տանում է խմբակի աշխատանքի հաշիվատուքը: Միջոց պետք է բարձր լինի նրա ուղիղական, ուղիղա-տեխնիկական, ուղիղաբաղադրական և ուղիղամեթոդական գիտելիքների մակարդակը, սխտեմատիկ ծանոթանալով ուղիղական ու Պաշտ-Ավիաբիմյան դրականություն և աշխատավորների ուղիղական պատրաստություն վերաբերյալ բոլոր ցուցումների հետ: Չեռնամուխ լինելով պարապմունքներին, նա պետք է խնամքով կշռադատի և վերլուծի աշխատանքի նախընթաց փորձը, հաշիվ առնելով թույլ տրված բոլոր սխալները: Այդ անհրաժեշտ է նրա համար:

մար, վորպեսզի պարապմունքների պլանն ու ծրագրերը ճշտորեն համապատասխանեն խմբակի ուժերին ու հնարավորություններին և վորպեսզի աշխատանքի հաջողությունը ձեռք բերվի, վորքան հնարավոր է, ուժերի ավելի տնտեսումով, յեռանդել ու նյութական միջոցների խնայողություններով: Պարապմունքների պլանն ու ծրագրերը մշակելու ժամանակ ղեկավարը պետք է ծրագրի այն կետերը, վորոնք նա անբավարար գիտե, և նախորդը մշակել այդ կետերը: Շատ տգտակար և ծանոթանալ մյուս, նման խմբակների աշխատանքի դրվածքի հետ և մանավանդ այն խմբակներին, վորոնք աչքի յեն ընկնում աշխատանքի լավ դրվածքով:

8. Հրահանգիչ խմբակավարի պարտականությունները

Հրահանգիչ-խմբակավարը պարտավոր է կազմել յուրաքանչյուր պարապմունքի պլանը: Պլանի բովանդակությունը պետք է լինի՝

ա) պարապմունքների նպատակը, բ) դասի ծավալի վերաբերյալ տեղեկությունների և վարժությունների համառոտ ամփոփումը, գ) ցուցումներ, թե ինչ հիմնական հարցերի վրա պետք է սրել ուշադրությունը (վորքան ժամանակ պետք է հատկացնել բացատրության համար, հարցերի ու վարժությունների համար), դ) պարապմունքների տեղի պատրաստությունն ու սարքավորումը, վարժական դույլի և պետությունների պատրաստումը:

Բացի դրանից, հրահանգիչը պետք է կատարի խմբակի աշխատանքի հաշվառումը: Պարապմունքներն սկսելով, հրահանգիչը պետք է խնամքով կշռադատի և անալիզի յենթարկի նախորդ աշխատանքի փորձը, հաշվի առնելով թերությունները:

9. Աշխատանքի հաշվառումը

Աշխատանքի հաշվառումն ամենից առաջ պետք է հայտարարի աշխատանքի թույլ կողմերը և այդպիսով նպաստի հետադադար այդ թերությունները վերացնելուն: Բացի դրանից, աշխատանքի հաշվառումը նյութ պետք է տա աշխատանքի պլանավորման, լայնացման և վորակի լավացման համար:

Հաշվառումն իր բովանդակությամբ բաժանվում է հետևյալ ձևով— անձնական կազմի հաշվառում, դույլի հաշվառում և աշխատանքի հաշվառում: Անձնական կազմի և աշխատանքի հաշվառումը նշվում է նրբաբակի ուղղման գեկավարի կողմից Պաշը-Ավիաբեմի կազմակերպության պարապմունքների մատյանի համաձայն: Բացի դրանից ուղղման գեկավարը պարտավոր է ուղղման պատրաստության հաշվառման համապատասխան թերթում նշել ամիս ամսաթիվը և ուսուցման կուրսի հաջող կամ բավարար վերջին արդյունքի մասին:

Առանձին ուշադրություն պետք է դարձնել պարապմունքներին կանոնավոր հաճախելու և սովորողների կարգապահության վրա: Վորևև պատճառով պարապմունքին հաճախելու դեպքում ցանկալի յե այդ բաց թողած պարապմունքի վերաբերյալ տալ առաջադրություն տանը կատարելու համար. բացի դրանից, նրանց հետ կարելի յե անցնել բաց թողած պարապմունքը հենց առաջին հնարավորության դեպքում: Ուսուցման յուրաքանչյուր բաժինն անցնելուց հետո անհրաժեշտ է անհատորեն

յուրացման ստուգում կատարել, տալով «լավ», «բավարար» և «թույլ» գնահատական: «Թույլ» գնահատականի դեպքում պետք է պարզել թույլության պատճառը և ոգնություն ցույց տալ յետ մնացողին: Հաջող ավարտած են համարվում նրանք, ովքեր բոլոր բաժինների ծրագիրը յուրացրել են բավարարից վոչ ցածր գնահատականով:

10. Ժամանակի բաշխման ուսուցման պլանը

Պատրաստության բաժինները	Ձևը/կ	Գիտելիքների անունը ժամեր
1. Ընդհանուր ուղղմաբաղադրական տեղեկություններ		1. Ռազմաբաղադրական պարապմունքներ 8 2. Պաշը-ավիաբեմի աշխատանքը 8 Ընդամենը 16
11. Մասնագիտական պատրաստություն		1. Ֆիզիկական պատրաստություն* 14 2. Հրաձգային պատրաստություն 6 3. Հակոդային պաշտպանություն 6 Ընդամենը 20
11. Դաշտային պատրաստություն		1. Տակտիկական պատրաստություն 20 2. Տեղագրություն 4 Ընդամենը 24
		Բոլորը միասին 60

*) Գետը և անցնել հրաձգային և տակտիկական պարապմունքների ընթացքում:

Ծ Ր Ա Գ Ր Ե Ր

1. Քաղաքական պատրաստություն

(4 պարագմունք—8 ժամ)

Քաղաքական պատրաստության նպատակն է ընդհանուր հասկացողություն տալ միջազգային զրուցության մասին՝ 17-րդ կուսակոնֆերանսի որոշումների հիման վրա (պատերազմի վտանգի աճումը, իմպերիալիստների կողմից ԽՍՀՄ վրա հարձակվելու սպառնալիքը և այլն), պաշտպանության խնդիրների մասին:

Ամբողջ ծրագիրը հաջվի յե անվամբ 4 պարագմունքի համար (8 ժամ) . 4 պարագմունքից 2-ը հատկացվում են ընթացիկ հարցերի վերաբերյալ զրույցներին (խորհուրդները վերընտրություններ, կարմիր բանակի տարեդարձ, դարնանացան և այլն) և մյն թեմաների համար, վերցույց կտա ՀամԿ(բ)Կ տեղական կուսկոմը:

Ծրագրի ուսումնասիրության աշխատանքը պետք է ընթանա կենդանի զրույցի մեթոդներով:

Նկատի ունենալով ծրագրի ընդգրկած հարցերի բավականին լայն ծավալը, անհրաժեշտ է նախորդ ապահովել նրանց մշակումը ունիչներին կողմից և այդ հիման վրա անցկացնել զրույցները:

Պարագմունք-զրույցներն անցկացնելով ղեկավարը պետք է պարագմունքի վերջից նկատի ունենա տաս րոպե թեմայի վերաբերյալ հիմնական յեզրակացություններ աներու համար և այդպիսով իսկ ապահովի ամբողջ պարագմունքի լիակատար յուրացումը:

Անհրաժեշտ է նույնպես արտադրողական աշխատանքի կարգով (ժողովներ, զրույցներ, պատի թերթեր և այլն) ապահովել ծրագրի հիմնական հարցերի լրացուցիչ մշակումը:

Մանրամասն մեթոդական մշակումները հրատարակված են ՊՈՒՈ-ի հրատարակած՝ 1930/1931 թվի քաղպարագմունքների ծրագրում:

Առաջին պարագմունք: ԽՍՀՄ միջազգային դրուբյուրը և պաշտպանության խնդիրները (2 ժամ): Սոցիալիզմ կառուցող յերկրի— ԽՍՀՄ-ի և կապիտալիստական աշխարհի միջև դասակարգային հակասությունների անհաշտելիությունը: Կապիտալիստական յերկրների համաշխարհային տնտեսական ճգնաժամը, հեղափոխական շարժման աճումը, սոցիալիստական շինարարության հանդուրժությունները ԽՍՀՄ-ում (հնդամյակի կատարումը, գյուղատնտեսության կոլեկտիվացում, կուլակության վերացումը վորպես դասակարգ համատարած կոլեկտիվացման հիման վրա և այլն) և իմպերիալիստների թշնամանքի աճումը ԽՍՀՄ նկատմամբ: Իմպերիալիստների կողմից պատերազմի պատրաստությունը ԽՍՀՄ դեմ: ԽՍՀՄ խաղաղության քաղաքականությունը յերկրի պատրաստությունը պաշտպանության համար: Կարմիր բանակը ԽՍՀՄ պաշտպանության հիմքն է: Պաշր-Ավիաբիմի դերն ու նշանակությունը յերկրի պաշտպանության պատրաստությունից զործում:

Ձեռնարկներ: 1) ընկ. ընկ. Ստալինի և Մորոտովի ղեկուցումները կուսակցության XVI համագումարում: 2) Ընկ. Գորչկովի յերույթը կուսակցության XVI համագումարում: 3) կուս համագումարի բանաձևը կուսակցության Կենտկոմի և կոմինտերնի ՀամԿ(բ)Կ պատգամավորների հաշվետվությունների առթիվ: 4) կոմինտերնի Գործադիր կոմիտեյի III պլենումի բանաձևերը:

Յերկրորդ պարագմունք: Սոցիալիզմը յուրեւ, հարվածայնություն և մարտական պատրաստություն (2 ժամ):

Սոցիալիզմը սոցիալիստական շինարարության և յերկրի պաշտպանության ամրացման կոմունիստական մեթոդն է: Սոցիալիզմը ու հարվածայնությունը հզոր ղենք են մարտական պատրաստության ամրացման զործում: Սոցիալիզմը և մարտական պատրաստությունը պլանի հասցնելը մինչև առանձին մարտիկը: Սոցիալիզմը և պայքար մարտական պատրաստության ուսցիտնացման համար: Թերությունները սոցիալիզմի անցկացման մեջ: Սոցիալիզմի կազմակերպիչներն ու ղեկավարները: ԽՍՀՄ ամեն մի աշխատավոր պետք է հարվածային դառնա:

Յ-րդ և 4-րդ պարագմունք — թեմաները ՀամԿ(բ)Կ տեղական կուսկոմի ցուցումների համաձայն (յուրաքանչյուր պարագմունքը 2-ական ժամ):

2. Պաշր-Ավիաբիմի աշխատանքը (4 պարագմունք— 8 ժամ)

Պաշր-Ավիաբիմի զործնական աշխատանքի ուսումնասիրության ծրագրի նպատակն է՝

ա) ընդհանուր հասկացողություն տալ պատերազմի աճույ վտանգի և ԽՍՀՄ դեմ պատերազմի պատրաստության մասին:

բ) ծանոթացնել Պաշր-Ավիաբիմի խնդիրների հետ նրա աշխատանքի տարբեր բնագավառներում և ծանոթացնել այդ աշխատանքի ձևերի հետ առանձին տեղ տարով աշխատավորների ռազմական պատրաստությունը:

գ) Նախապատրաստել Պաշր-Ավիաբիմի աշխատանքի զործնական հարցերի ակտիվ՝ առանձնապես մասսայական ռազմական աշխատանքի մասում:

Ամբողջ ծրագիրը բովանդակում է 4 զրույց և հաջվի յե անվամբ 8 ժամվա համար: Բացի զրանից, իմբակի անդամները վոչ պակաս 18 ժամ պետք է զործնական աշխատանք տանեն վարժական կայաններում և իմբակներում վորպես ակտիվ:

Պարագմունքներն անցկացնելիս հարկավոր է համատու կերպով կանդ առնել Պաշր-Ավիաբիմի աշխատանքի ընդհանուր խնդիրների և բնագավառների վրա: Ռազմական պատրաստության ղանաղան ձևերը բնակելի գլխավոր ուղղությունը պետք է կենտրոնացնել վարժական կայանների (պունկտերի) և իմբակների կազմակերպության և աշխատանքի վրա, ընդգծելով դրա հետ միասին, վոր ռազմական ուսուցումը Պաշր-Ավիաբիմի կազմակերպություններում ղի հետապնդում ղորական մասեր (զորամասեր) ստեղծելու խնդիրներ, ինչպես ԲԳՎԻ ղորա-

մասերն են, այլ նրա հիմնական նպատակն է պարտասել ուղղմամբ
սովորած համայնքում կարմիր բանակի դրամասերի համար: Առանձ-
նապես ուշադրութեամբ պետք է սրել մասսայական ուղղման աշ-
խատանքի կամավոր ձևերի վրա, ցույց տալով, վոր Ընկերութեան աշ-
խատանքի կամավոր տեսակները մնում են վորպես գլխավորներ, իսկ
զինվորական պարտադիր ծառայութեան որոշակի կարգով ուսուցման
պարտադիր ձևերը և կուսկոմյերիտական կարմիր պարտադիր ուղղման
ուսուցումը նպատակ ունեն բարձրացնել աշխատանքի կամավոր տեսակ-
ների վորակը:

Առաջին պարագամբ: Պաշտ-Ավիաֆիմի խնդիրները կապված կու-
սակցութեան XVI համագումարի վորոշումների հետ (2 ժամ): - -

XVI կուսհամագումարը, նրա դերն ու նշանակութեամբ: Կուսակ-
ցութեան XVI համագումարի կարևորագույն դրույթներն ու վորոշում-
ները: Պաշտ-Ավիաֆիմը վորպես հաղորդիչ փոխերից մեկը կուսակցու-
թեան համագումարի վորոշումները կենսագործելու խնդրում կուսակ-
ցութեանց ղեկավար մասնակցությունը: Պաշտ-Ավիաֆիմի խնդիրները կուսակ-
ցութեան համագումարի վորոշումները ժողովրդականացնելու և պրո-
պագանդի ասպարիզում: Բեկում և կուսակցութեան համագումարի կա-
րևոր վորոշումները իրացումը պաշտպանութեան ամրացման վերա-
բերյալ Պաշտ-Ավիաֆիմի աշխատանքում: Ընկերութեան ուսուցանական
ողակի ամրացման խնդիրները և կազմակերպչական աշխատանքի լավա-
ցումը: Ընկերութեան հնդամյա պլանն անցկացնելու խնդիրները: Ըն-
կերութեան ամբողջ աշխատանքի վերակառուցումը և սոցմրջակցու-
թեան, հարվածայնութեան և ինքնաքննադատութեան ծավալումը:
Յերկրի ջրիցման խնդիրները: Ընկերութեան պաշտպանական աշխա-
տանքի զուգակցումը կուսակցութեան արաջադրած քաղաքական-տրն-
տեսական հիմնական խնդիրների հետ: Ընկերութեան քաղաքական ակ-
տիվութեան բարձրացման խնդիրը ղեկավարութեան և աշխատանքի ամ-
բողջ սխտեմում:

Ձեռնարկներ. 1) կուսակցութեան XVI համագումարի բա-
նաձևը. 2) ՍՍՀՄ Պաշտ-Ավիաֆիմի Միութեան ԿԽ նախադա-
հութեան բանաձևը «Պաշտ-Ավիաֆիմի հերթական խնդիրների
մասին» կապված ՀամԿ(բ)Կ 1930 թ. հուլիսի 32-ի XVI համա-
գումարի վորոշումների հետ. 3) Լ. Մալինովսկի. «Պաշտ-Ա-
վիաֆիմի խնդիրները կապված կուսակցութեան XVI համագու-
մարի վորոշումների հետ». 4) Այդ առթիվ «Պաշտ-Ավիաֆիմ
ժուրնալում յեղած ղեկավար հոդվածները:

2-րդ պարագամբ: Պաշտ-Ավիաֆիմի աշխատանքների կազմա-
կերպչական կառուցվածքն ու ձևերը (2 ժամ):

Ով կատող է Պաշտ-Ավիաֆիմի անդամ լինել: Անդամի իրավունքնե-
րն ու պարտականութեանները: Իրավական անդամութեան: Պաշտ-
Ավիաֆիմի բջիջը և նրա խնդիրների շրջանակը: Ինչպես բջիջ կազմա-
կերպել: Դեկավար մարմինների ընտրութեանը—բյուրո և վերստուգիչ
հանձնաժողով: Աշխատանքի բաժանումը բյուրոյի անդամների միջև:
Յեխային կազմակերպիչն ու նրա պարտականութեանները: Վարժական
կայանների (պունկտների), խմբակների, անկյունների կազմակերպումը
և ձգարանների (տիրերի) կառուցումը: Պաշտ-Ավիաֆիմի անդամների

պրակտիկ աշխատանքի մեջ դրավումը և նոր անդամների հավաքադ-
րումը: Ակտիվի հայտարարումը: Ընկերութեան ցուցումների կատարու-
մը և կապը վերադաս մարմինների հետ:

Պաշտ-Ավիաֆիմի ուսուցանական խորհուրդը և նրա ստորին բջիջների
ղեկավարութեանը:

Ընկերութեան համագումարները: Շրջանային, մարզային և հան-
րապետական խորհուրդներ: ՍՍՀՄ Պաշտ-Ավիաֆիմի Միութեան Կենտ-
րոնական խորհուրդը: խորհուրդների պլենումների և նախադահու-
թեանների աշխատանքը: Պաշտ-Ավիաֆիմի վերստուգիչ հանձնաժո-
ղով: Պաշտ-Ավիաֆիմի խորհուրդների սեկցիոն աշխատանքը:

Պաշտ-Ավիաֆիմի կազմակերպութեանների փոխհարաբերութեան-
ները զորական մասերի հրամատարութեան, կուսակցական, կոմյերի-
տական, խորհրդային, արհմիութենական և մյուս հասարակական
կազմակերպութեանների հետ:

Պաշտ-Ավիաֆիմի աշխատանքի հենարան-բաղանները՝ ուղղման
անկյունները, ձգարաններ (տիրեր), ճամբարներ, վարժական կայան-
ներ, հրաձգարաններ, մանյուվրներ, այգերակումբներ, ավիո-դպրոց-
ներ, փորձակայաններ, ծովային, սլանյորական, մոդելային կայան-
ներ և այլն:

Մասսայական աշխատանքի կառուցման սկզբունքները: Ակտիվի
դերը մասսայական աշխատանքի ծավալման դործում: Ընդգրկումը
(առաջին հերթին նախալիզիկներին, արտադրայիններին, փոփոխի-
ներին և պահեստայիններին): Կանանց և աղջիկների ներգրավումը:

Ինչպես կազմակերպել և անցկացնել ղեկուցում, զրույց, քասա-
խոսութեան, ընթերցում, խմբակային աղիտացիա, ցուցահանդես,
երկուրսիա, հաճախումը կարմիր բանակի դրամասերը և այլն:

Կամպանիաների անցկացումը:

Ինչպես կազմակերպել Պաշտ-Ավիաֆիմի անկյուններ: Յուցադրա-
կան պիտույքներ: Ռազմական դրականութեան ժողովրդականացումը:
Անցկացվող կամպանիաների արտացոլումը, անկյան վարիչի պարտա-
կանութեանները, աշխատանքի հավառումը: Բյուրոյի ղեկավարու-
թեանը անկյան աշխատանքի վրա:

Վարժական կայանների և խմբակների տիպերը ընկերութեան աշ-
խատանքի զանազան ճյուղերին համապատասխան:

Պաշտ-Ավիաֆիմի պատի թերթեր և Պաշտ-Ավիաֆիմի բաժինները
ընդհանուր պատի թերթերում: Պաշտ-Ավիաֆիմի աշխատանքի բուսարա-
նումը մամուլի մեջ: Պաշտ-Ավիաֆիմի մամուլի տարածումը:

Պաշտ-Ավիաֆիմի տեղական խորհուրդի աշխատանքը: Կոնկրետ խըն-
դիրների և մոտիկ ժամանակում տեղական խորհուրդի կողմից կենսա-
դործման համար նշված միջոցառումների քննարկումը:

Ձեռնարկներ. 1) ՍՍՀՄ Պաշտ-Ավիաֆիմի Միութեան կանո-
նադրային ժողովածու. Պաշտ-Ավիաֆիմի հրատ. 1929 թ.
2) Պաշտ-Ավիաֆիմի աշխատակիցների Համամիութենական խոր-
հրդակցութեան բանաձևը՝ «Պաշտ-Ավիաֆիմի հերթական խըն-
դիրները և ղեկավարութեան հարցերը» (ժուրնալ «Պաշտ-Ավիա-
ֆիմ» 1929 թ. № 17). 3) Պաշտ-Ավիաֆիմի բջիջի քարտուղարի
տեղեկատու. 4) տեղական խորհուրդի աշխատանքի պլանը. 5) Պա-
շտ-Ավիաֆիմի ԿԽ II պլենումի բանաձևը:

3-րդ պարագրֆումը: Ընկերություն մասսայական ուսումնական աշխատանքը (2 ժամ):

Պաշր-Ավիաքիմի ուսումնական պատրաստութեան սիստեմը: Պարտադիր ուսումնական պատրաստութեան:

Հիմնական ուշադրութեան մասսայական ուսումնական աշխատանքին: Պաշր-Ավիաքիմի խնդիրները մասսայական ուսումնաբարձական պրոպագանդը: Ամբողջ մասսայական քաղաքիտացիայի և պրոպագանդի կապը յերկրի պաշտպանութեան խնդիրներին հետ պատերազմի պատանդի առնչութեամբ:

Ռազմական աշխատանքը պահեստի պետերի կազմի վերապատրաստութեան կուրսերում ու տակտիկական կատարելագործման և ուղիղ կուրսի գիտելիքների խմբակներում, վարժական կայաններում:

Ռազմական աշխատանքի առանցքը հրաձգային դործն է: Հրաձգային խմբակներ և խմբեր (կոմանդանտներ): Նրանց պարագրֆումները ծավալը: Հրաձգային մրցակցութեաններ: Կոնկուրաներ: Հրաձգային խնդիրներ: Անհրաժեշտ զենք և պիտույքներ:

Տակտիկական պատրաստութեան: Տակտիկական պարագրֆումները: Յերթեր: Ռազմական դրոսանքներ: Ռազմախաղեր: Խնդիրներ: Կոնկուրաներ: Մրցակցութեաններ: Պարագրֆումներ ավագով լցրած արկղի ուղևորութեամբ:

Ծանոթացում ուսումնական տեխնիկայի հետ ցուցադրական պարագրֆումներում և յերթերում եքսկուրսիաների միջոցով զեպի դորամասերը, ջիմիական փորձերի միջոցով, մոդելաշինարարութեան դարգացումը և այլն:

Հակողային Պաշտպանութեան խմբակներ (ՀՈՊ): Պաշր-Ավիաքիմի հակողային պաշտպանութեան խմբակները ուսուցման կազմակերպումը, ձևերն ու մեթոդները: Ողաքիմիական հարձակումներին նսցենիքով, մասնակցութեան բնակավայրերի հակողային պաշտպանութեան մասնագիտական պարագրֆումներին: Հակողային պաշտպանութեան անկյուններ և այլն:

Քաղաքացիական բնակչութեան (ուսումնասիրտարական մասսայական պատրաստութեան խնդիրը ժամանակակից պատերազմների պայմաններում: Կարմիր խաչի (ՌՌԿԿ) ընկերութեանը և նրա նշանակութեանը բնակչութեան ուսումնասիրտարական պատրաստութեան ասպարեզում: Պատրաստութեան սիստեմը: Առաջին ուղևորութեան խմբակներ: Մանիտարական գրուժինաներ: Պահեստի քույրերի պատրաստութեանը: Պաշր-Ավիաքիմի կազմակերպութեանները և կարմիր խաչի ընկերութեան փոխհարարութեանները: Պաշր-Ավիաքիմի բնիկները կազմակերպչական ուղևորութեան անհրաժեշտութեանը՝ խմբակները և կարմիր խաչի բնիկ ցանցի ընդարձակման դործում՝ ձեռնարկութեաններում:

Ամառվա աշխատանքի ձևերն ու մեթոդները, — տակտիկական պարագրֆումները, Պաշր-Ավիաքիմի ճամբար, մանյովրներ, մասնակցութեանը ԲԳԿԻ մանյովրներին, ուսումնական դրոսանքներ, ուսումնական խմբակներին սպորտի բոլոր տեսակները, էքսկուրսիաներ, տուրիզմ:

Վարժական-չարային միավորների աշխատանքը, վարժական կայանների աշխատանքը և սոցիալակցութեան անցկացումը կապված ուս-

մական պատրաստութեան վորակի բարձրացման և աշխատանքի փոխարինութեան հետ:

Ռազմական-տեղեկատվական աշխատանք:

Չեռնարկներ. 1) Պաշր-Ավիաքիմի ԿՍ նախադասութեան բանաձևը ուսումնական սեկցիայի ղեկուցման առթիվ: («Ռոս-Ավիաքիմ» ժուրնալի 7-րդ համարը, 1929 թ.) 2) Համամիութենական խորհրդակցութեան բանաձևը «Պաշր-Ավիաքիմի հերթական խնդիրները և ղեկավարութեան հարցերը»: 3) Պաշր-Ավիաքիմի ԿՍ II պլենումի բանաձևը: 4) Պաշր-Ավիաքիմի քարտուղարի տեղեկատու. Պաշր-Ավիաքիմի հրատ. 5) Հակողային պաշտպանութեան (ՀՈՊ) խմբերի կանոնադրութեան: 6) ՀՈՊ խմբակների կանոնադրութեանը: 7) ՎՆՈՍ-ի պատերի կանոնադրութեան: 8) Կանանց մեջ կատարվող Պաշր-Ավիաքիմի աշխատանքի տեղեկատու: Պաշր-Ավիաքիմի հրատ.: 9) Իվանովսկի Յե. Ի. «Ինչ է ՌՌԿԿ»: 10) Պաշր-Ավիաքիմի համաձայնադրը ՌՌԿԿ-ի հետ: Կանոնադրային ժողովածու: 11) Հրահանգ յերկրային դորամասերի համար. Պետհրատ, 1929 թ. 12) 31 թ. 5 ՎՍ ուսումնական բաժինների վարչիների խորհրդակցութեան բանաձևը:

4-րդ պարագրֆումը: Վարժական կայանի և ուսումնական գիտելիքների խմբակի աշխատանքը (2 ժամ):

Ռազմական մասսայական աշխատանքը և աշխատանքը վարժական կայաններում (պոնկտներում) և ուսումնական գիտելիքների, առաջին ուղևորութեան խմբակներում, ավիոգրիմիկատներում և այլն:

Ռազմական աշխատանքի կամավոր և պարտադիր ծրագրերի ուսումնասիրումը:

Ռազմական ուսուցումն անցնողներին առաջադրվող հիմնական պահանջները, — այն է՝ հաշվառում, կարգապահութեան, ցուցադրութեան, դործնականութեան, սովորողների ակտիվութեանը վորպես միջոց բարձրացնելու հետաքրքրութեանը զեպի պարագրֆումներն ու ուսուցման վորակը:

Գործնական միջոցառումներ այդ պահանջները կատարելու համար՝

ա) հաճախելիութեան և յուրացման ցուցակադրումը պարագրֆումներին մատյանի համաձայն. բ) պարագրֆումների խիստ դործարարութեան և անկարգանքներին ու անկարգներին կարգի հրավիրելը և այլն. գ) ցուցց տալու, ցուցադրական պիտույքների (պլակատների, մոդելների, մաքետների և այլն) լիակատար ուղտագործումը. դ) վիճելի հարցերի դրումը, — այն է՝ վիճերի, հարցերի ու պատասխանների և այլն:

Պարագրֆումների պլանը կազմելու մեթոդը՝ ա) կազմի, ուսումնական պատրաստութեան և սովորողների ընդհանուր զարգացման հաշվառումը. բ) տեղի ընտրութեան պարագրֆումների համար. գ) պարագրֆումների սարքավորման հաշիվը և նրա քաղաքագործումը. դ) թեմաների և յենթաթեմաների բաժանումը, հարցերը վրախառն հարցերի տարելով. ե) պարագրֆումների ժամանակի հաշիվը. զ) ցուցադրական պիտույքները կազմելու տեխնիկան խնամադրծունեյութեան կարգով:

կ) հարցաթերթ կազմելու կանոնները կոնտրոլի համար և յուրացման ստուգումը ը) յուրաքանչյուր պարագամունքի աշխատանքի փորձի հաշվառումը հաջորդ պարագամունքներն անցնելու վորակը բարձրացնելու համար:

Ձեռնարկներ. ծրագրեր արտադրային պատրաստության համար և K-B-3. I և II ստատիստիկ:

3. Ֆիզիքական պատրաստություն

(Անցնում են հրաձգային տակտիկական պարապմունքների ընթացքում)

Ֆիզիքական պատրաստության մասին սովորողները ճիշտ հայացք դաստիարակելու խնդիրը մշակվում է ամբողջ ուսուցման ընթացքում՝ մշտապես ուղղորդվում գրավելու միջոցով այդ մոմենտի վրա զեկավարի կողմից:

Պարապմունքների ֆիզիքական անբավարար զարգացման հետ կապված բոլոր թերությունները պետք է ցույց տրվեն նրանց և այդպիսով դաստիարակեն սովորողների մեջ ձգտում վերացնելու այդ թերությունները:

Հատուկ վարժությունները (նախապատրաստական) անց են կացվում յուրաքանչյուր պարագամունքի սկիզբն 8—10 րոպե և պարպամունքներից հետո 3—5 րոպե:

Ռազմա-կիրարկելի ունակությունների ուսուցումը պետք է անցնել հրաձգա-տակտիկական և շարային պարագամունքների ընթացքում, յերբ զեկավարը պահանջում է պարապմունքից մոտ միայն տակտիկապես ճշտորեն կատարել շարժումները, այլև տեխնիկապես ճիշտ: Սխալ կատարվող շարժումներն անպայման պետք է ուղղել և կրկնել:

Ուսուցման մեթոդն առավելապես ցուցադրականն է:

Շատ ցանկալի չէ, վորպեսզի բոլոր պարապմունքները մտնեն ֆիզիկոլոգիայի խմբակի մեջ: Այդ մոմենտը կլինի խմբակի աշխատանքի հաջորդության ցուցանիշներից մեկը:

Նախքան պարագամունքներին անցնելը անհրաժեշտ է համաձայնություն գալ մտակա ֆիզիկոլոգ կազմակերպության հետ, վերջինիցս ողնություն ստանալու համար՝ խմբակում ֆիզպատրաստության աշխատանքը կազմակերպելու տեսակետից:

Վարժությունների մատավոր ցանկը, վոր պետք է անցնել.

Քայլ և վազ: Քայլը սովորական քայլով (115—120 քայլ մի րոպեյում 75—80 սմ. յերկարության), արագացրած քայլով (120—125 քայլ մի րոպեյում 80—90 սմ. յերկարության): Քայլը անհարթ տեղանքում (վերելք, վարելք, ճահճուտ և փխրուն դեմնով): Դանդաղ վազը, արագացրած վազը, արագությամբ վազանց: Ստարաներ պառկած դրությունից: Քայլից վազելն անցնելը և ընդհակառակը: Քայլը և վազը կոացած: Շարժում հենարանի փոքր հարթակով (քարեր, թրմբեր, գերաններ, բումեր և այլն):

1001
34784

Սողալը—վորպես առջ շարժվելու միջոց և արդելքների տակը սողալը՝ չորեքթաթ, կողքի վրա, փորի վրա, պլաստունածև, յերեսի վրա (լարեր կտրելու համար), հարթ և խորզուբորդ տեղանքում (ղեպի սարը, սարից ցած, գերաններով, թփուտներով և խիտ կանաչի մեջ): Սողալը հրելով և քաշելով զնդացրերը, փամփուշտի արկղները և ցինկերը:

Ծանրությունների փոխադրում: Կենդանի և մեռյալ բեռները բարձրացնելու և փոխադրելու յեղանակների ուսումնասիրություն (մարդկանց, տուրակներ, ռազմական դույք): Բեռան փոխադրում հենարանի փոքր հարթակով (գերաններով, թմբերով և այլն): իմրակներով ծանրությունները բարձրացնել զառվճարի վրա և իջնցնել թեքատով (քարչային և հրումով):

Թռիչքներ: Հասարակ—յերկարությամբ տեղից և դու քաշելով և բարձրությամբ դու քաշելով (կանգ առնելով, վազք շարունակելով, յետևում (պառկելով): Թռիչքներ ձողով յերկարությամբ և բարձրությամբ յարամատի վրայից, լարի վրայից, ձողը թողնելով հրելու տեղում և վերցնելով իր հետ (կամ յետ նետելով): Թռիչքներ ուղեկցական և հաջորդական հարվածներով (ային—կոթ) կանգնած և պառկած յրավիակներին:

Սողալն ու սողալով անցնելը: Սողալ վնասերը պատին հենելով: Սյուների և ծառերի վրա շուրջվելը: Հյուսվածքների, պարտեզների ցանկապատերի հաղթահարումը, ինքնուրույն և խմբակներով (փոխադարձ ողնությամբ): Թփուտներով, կանաչով դիք լանջերի վրա սողալով բարձրանալը (հողե և ավաղե) առանց վոչնչի աղնության և պարանի, փայտերի, բահերի և այլն ողնությամբ:

- Ձեռնարկներ: 1) Արտադրայինի ուղեցույց: Հրատ. ԳԻՁ: 2) Ֆիզպատրաստության և սպորտացման հիմունքները Պաժը-Ավլաքիմով: 3) Մարտիկի ֆիզիքական պատրաստությունը: Ռազմժողկոմատի տպարանի հրատ. 1926 թ. 4) Տյուչենսկի—մարտիկի մարզանքը: ԳԻՁ, 1928 թ. 5) ԲԳԿՖ ֆիզիքական պատրաստության ձեռնարկ:

4. Հրաձգային պատրաստություն

(7 պարագամունք— 14 ժամ)

Հրաձգային պատրաստությունը տակտիկական պատրաստության հիմնական տարրն է ու անբաժան մասը:

Հրաձգային պատրաստության նպատակն է կոփել զերազանց հրաձիգ, բավականին պատրաստված ինքնուրույն գործողությունների համար ստորաբաժանումների կազմում:

Գերազանց հրաձիգ պատրաստելու համար պետք է՝

- ա) ուսումնասիրել առաջին հերթին ձիգ կատարելու ճիշտ տեխնիկան.
- բ) հրաձգային պատրաստությունը սերտորեն կապել արտադարոցական սպորտա-հրաձգային աշխատանքի հետ.
- գ) ճշտորեն իրար դուրս գրելու և թեորեաիկ պարագամունքները, այն սկզբունքով, որով հիմնականում է պրակտիկայից և ամրացնում է պրակտիկան:



Պարտատուքյունի նկարագրությունը	Վարժության նպատակը	1. Քննել 2. Հետազոտություններ 3. Քրիստոսը 4. Փամփուռյաններէ քանակը 5. Նշաններ	1. Հրածագային նամար դրությունը 2. Զիգ կատարելու ժամանակը 3. Գրգուռներէ ցույց տալը	Առաջադրութիւններ և, գնահատականը
